## ՎԵՆՆԱՅԻ «ԱՆԻ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

*Անցեալ անգամ մենք հաղորդել էինք, որ Վեննայի հայերը կազմել են «Անի» անունով մի ընկերութիւն, որ հաստատուած է արդէն Վեննայի քաղաքապետից։ Այժմ մեզ ուղարկուած է այդ ընկերութեան տպած կանոնադրութիւնը, որի 2-դ յօդուածը այսպէս է որոշում ընկերութեան նպատակը. – «Ընկ. նպատակն է, քաղաքական խնդիրներէ բոլորովին հեռու՝ ա) անդամոց ընկերական կեանքը զարգացնել. բ) աղքատ և արժանաւոր հայ ուսանողաց՝ ընկ. միջոցներուն ներածին չափ նպաստել»։ Կանոնադրութիւնը վաւերացրել է Կայս.—Թագ. կուսակալ Բախնէր 1902 մայիս 3-ին և շատ սահմանափակ կազմակերպութիւն ունի, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք, որ Վեննայի համալսարանում միմիայն մի հատիկ հայ ուսանող կայ և նա ևս մտադիր էր վերջին սեմեստրին Վեննայից տեղափոխուել գերմանական մի այլ համալսարան։*

*Ցանկալի է, որ ընկերութիւնը մտցնէր իւր նպատակների թւում և մի հայ մատուռ կառուցանելու և Վեննայով յաճախակի երթևեկող գաղթականներին օգնելու խնդիրը։*

---

## ԻՐ ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՆԸ [1])

*«Արևելք» իր շաբաթ օրուան թիւով հրատարակեց Հայրապետական կոնդակը որ կը հաստատէ «Ղուկասեան մրցանակ» ին տրամադրութիւնները։ Այդ մրցանակը, որ իր ընդհանուր գիծերուն մէջ շատ չի տարբերիր Յովսէփ Իզմիրեանց գրական մրցանակէն, տարեկան 500 րուբլիի գումար մըն է՝ հայ լեզուի և հայ դպրութեան վրայ բանասիրական լաւագոյն երկասիրութեան հեղինակին նուիրելի։ Իր սահմանին մէջ են նաև «հին հայ մատենագիրների թարգմանութիւն՝ լուսաբանութիւններով կամ քննադատութիւններով ճոխացրած, եկեղեցական պատմութեան լուսաբանուած հատուածներ, գեղարուեստի հետազօտութիւն, օրէնսգիտութեան կամ կանոնագիտութեան վերաբերեալ տեսութիւններ» և այլն։*

*Յարակից պայմանները մեկին կերպով ամփոփուած են Հայրապետական կոնդակին մէջ, որ հանդիսաւորապէս կարդացուեր է Թիֆլիսի վանքի թանգարանին բացման օրը, փետրվար 21ին։ Այդ պայմանները անշուշտ իրենց արժանի ուշադրութիւնը պիտի գրաւեն և մրցանակը շահելու գրգիռ մը պիտի ազդեն ձեռնհաս բանասէրներու, որոնք աշխատութեան լայն դաշտ մը կը գտնեն իրենց առջև։ Բաց ի Գրական*

---

[1]) «Արևելք» 1902 № 4904.